

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՀԱՐՈՒՏԻ ՈՐԴԻՈՅՆ ՊԱՆԴԻՏՈՒԹԻՒՆԸ

- 72) Բայց այս չի տեսեր, ոչ է տեսական,
 Մարտն զգացած՝ այդ եւ զգացնել տուած.
 Կըրնար լաւագոյնս գործածուիլ սակայն,
 Անոր կորովէն մարդիկ հրապուրուած,
 Իրար դէմ ելած են գութն չէ հալած
 Ինչ որ բընածին սովորոյթն է անոր,
 Իսկ մութ այրերու մէջ ճնշուածներն այն՝
 Արծիւներ չէին սընուած լաւ օրին,
 Ինչո՞ւ ուրեմն զարմանալ՝ որ անոնք որս չըբերին:
- 73) Խոր վերք գուցուեցա՞ւ բնաւ սպի չթողած.
 Խիստ արնահոսում սրտի՝ կը թողու զայն
 Եղծուած. ան որ իր յոյսին հետ է կռուած
 Պիտի անիկա պարտուի անպայման.
 Լըռութիւնն ոչ հլու կեցուածքն է միայն
 Իր որջին մէջ կ'զսպէ ըզնա մինչեւ որ
 Հասնի, պիտ' հասնի, պիտի հասնի ժամն,
 Պիտի գայ ուժը այդ խիստ զօրաւոր
 Վարձատրելու կամ պատժելու՝ ուշացած է օրն:
- 74) Անդորր լիճ Լեման է հակապատկերն՝
 Կռպիտ աշխարհին ուր ապրեցայ ես.
 Անդորրութիւնն իր կ'թելադրէ փոխել
 Երկրի խռով ջրերն այլ ջրերով հեզ,
 Որ հանդարտ նաւով, անցորդ թելի մ'պէս,
 Փըրկէր պիտի զիս կործանումներէն,
 Երբեմնի սիրած ծովադմուկներէս,
 Քըրոջ մը քաղցըր իր մրմունջներէն՝
 Պիտի փոխուէի խըրատներովն իր զըւարթ խըստօրէն:
- 75) Խաղաղութիւն է գիշերային եւ
 Ափիդ ու լերան միջեւ տես մըթար,
 Դէմքը բայց յըստակ մութն հասուն թէւ.
 Բայց ձեւըս լերան մեզ հակած կատարն
 Այտու աւելի մեզ կը մօտենար.
 Արդէն կենսաւէտ բուրմունքը ծաղկանց,
 Կը հասնէր մեզի. կաթիլներ թեթեւ
 Կ'իյնային հատ-հատ թիերէն կախուած,
 Կը հընչէր ճըռռոցը մարախներու գովերք Գիշերուան:

(շարունակելի)

LORD BYRON
Թրգմն. Մուրատ Մանուկեան